

№ 941 (479. 243)

Գրականագիտություն

**1826–28 թթ. ՌՈՒՍ-ՊԱՐՍՅԱԿԱՆ ՊԱՏԵՐՍԶՈՐ ԱՊՐԵՍ ԲԵԿՆԱԶԱՐՅԱՆԻ
«ԳԱՂՏՆԻՔ ՂԱՐԱՔԱՂԻ» ՊԱՏՄԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ
Զինադա ԲԱԼԱՅԱՆ**

Բանալի բառեր. Սանկտ Պետերբուրգ, աշխարհաբար, Բաֆֆի, «Գաղտնիք Ղարաբաղի», Լեո, «Լէօյի պատմություն», մեկնաբանական (հերմենևտիկ), արժեքաբանական (արքիոլոգիական):

Ключевые слова: Санкт-Петербург, современный армянский язык, Раффи, “Тайна Карабаха”, Лео, “Роман или история?”, аналитический (герменевтический), оценочный (аксиологический).

Keywords: St. Petersburg, modern Armenian, Raffi, Mystery of Karabagh, Leo, A Novel or a Story, analytical (hermeneutic), estimative (axiological).

З. Балаян

Русско-персидская война 1826-1828гг. в историческом исследовании

Апреса Бекназаряна „Тайна Карабаха,,

История армянской литературы и периодической печати свидетельствует о явлениях, носящих спорный характер, которые привлекли внимание определенных литературных, критических и публицистических кругов.

В 1886г. в Санкт-Петербурге в переводе (с габара на современный армянский язык) Бархударяна Макара при поддержке мецената Аракела-ага Цатуряна было издано историческое исследование Бекназаряна Апреса “Тайна Карабаха”.

В периодической печати вышли как отрицательные, так и положительные отзывы, оценки, рецензии.

Были так же опубликованы исследования (Раффи “Тайна Карабаха”, Лео “Роман или история?”). Но в конечном итоге, это исследование целиком было обесценено и отвергнуто.

С этой точки зрения, исследуемый материал приобретает актуальное научное звучание. Он выполнен в рамках современной критико-аналитической (герменевтической) и оценочной (аксиологической) системы.

Z. Balayan

Russian-Persian War of 1826-1828 in Apres Beknazaryan's Historical Research

“Mystery of Karabagh”

History of Armenian literature and periodical press testifies to the phenomena carrying contentious nature and attracting the attention of certain literary, critical and publicistic circles.

Apres Begnazaryan's historical investigation “Mystery of Karabagh” (translated from Grabar into Modern Armenian by Makar Barkhudaryan) was published under the patronage of Arakel-aga Tsaturyan in St. Petersburg in 1886.

The investigation called forth both negative and positive evaluations, feedbacks, reviews and among them such studies as Raffi's “Mystery of Karabagh” and Leo's “A Novel or a Story”. At last, the research was depreciated and completely rejected.

From this point of view, the material under investigation provides a modern scientific view point. It is conducted in the framework of new critical-analytical (hermeneutic) and estimative (axiological) system.

Հայ գրականության եւ պարբերական մամուլի պատմությունը փաստել են բանավիճային բնույթ ներկայացնող երևույթներ, որոնք գրավել են գրական, քննադատական, հրապարակախոսական որոշ շրջանակների ուշադրությունը:

1886թ. Սանկտ Պետերբուրգում Մակար վարդապետ Բարխուդարյանի թարգմանությամբ (գրաբարից աշխարհաբար), Առաքել աղա Ծատուրյանի մեկնատությամբ հրատարակվել է Ապրես Բեկնազարյանի «Գաղտնիք Ղարաբաղի» պատմական ուսումնասիրությունը:

Ուսումնասիրության շուրջ պարբերական մամուլում լույս են տեսել դրական եւ բացասական կարծիքներ, գնահատումներ, գրախոսություններ, հրատարակվել են ուսումնասիրություններ (Բաֆֆի, «Գաղտնիք Ղարաբաղի», Լեո, «Լէօյի պատմություն», Մ. Բարխուդարյան, «Քննադատություն քննադատությանը»): Վերջնական արդյունքում աշխատությունը ամբողջությամբ արժեքազրկվել եւ մերժվել է:

Այս տեսանկյունից ուսումնասիրվող նյութը ձեռք է բերում արդիական գիտական հնչողություն՝ կատարված գրաքննադատական վերլուծական նոր համակարգի՝ մեկնաբանական (հերմենևտիկ) եւ արժեքաբանական (արքիոլոգիական) քննումների զուգորդմամբ...

1886թ. Սանկտ Պետերբուրգում հրատարակված (գրաբարից՝ աշխարհաբար թարգմանությունը Մակար Բարխուդարյանի) Ապրեն Բեկնազարյանի «Գաղտնիք Ղարաբաղի» պատմական ուսումնասիրությունը պատմական տարաբնույթ տեղեկություններ է ամփոփում՝ կապված հայ ժողովրդի պատմության, մասնավորապես արցախահայության քաղաքական ճակատագրի վերհանմանը: «Գաղտնիք Ղարաբաղի» գրքի ուսումնասիրության մանրագնին քննությունը հետաքրքիր շրջանակներ է բացում նաև նյութի թե՛ ժանրի, հետապնդած խնդիրների, թե՛ հայրենիքի նկարագրի ստեղծման ու պատկերման, ներքին ու արտաքին քաղաքական կյանքի մեկնաբանման, թե՛ բանահյուսական, իրավական, գրական, լեզվական ու այլ դրսևորումների տեսանկյունից:

1825 թվին մահացավ Ալեքսանդր Առաջին ցարը, որին փոխարինեց Պավել Առաջինի որդի Նիկոլայ Պավլովիչը, քանզի Ալեքսանդր Առաջինը որդի չունեց: Պարսից նրկիրը ցավակցական գրություններ հղեց Ռուսաստան: Մյուս կողմից էլ՝ պատրաստվեց արշավանքի: Գրքում հետաքրքիր տեղեկագրություն կա ռուսաց պաշտոնյաների պաշտոնակալության մասին՝ կապված Անդրկովկասի նրկրների քաղաքական կյանքի հետ, որոնց գործունեության առանցքները հետաքրքիր պատմական և փիլակական շերտեր են բացում Հայաստանում և Արցախում:

«Այդ ժամանակի Ռուսաց պաշտոնատարներն էին
Տփլիսիսում Գիներալ-Եարմալովն ընդհանուր կառավարիչ,
Շամախում Ստարկով կամենդանտն (քաղաքապետ),
Թաւրիզում Գիներալ-Սենիամինով հիւպատոսն,
Խուտափիրինում՝ սահմանապահ Մալչանովն,
Ղափանում՝ Պարուչիկ-Շակալովսկին,
Բռնակոթում՝ Պետրոս-բէկ Մատաթեանցն,
Կեօրիսում՝ Նագիլիկն,
Նորաշենում՝ Շոպալովսկին,
Աւետարանոցում՝ Կենազ-Մատաթովն և Ռէյուտն, և
Շուշում՝ Չիլանովն...»¹:

Երբ (1826 թ. հուլիսի սկզբներից մինչև օգոստոսի 8-ը) իշխան Մադաթովը մեկնել էր կազդուրման՝ Կովկասյան հանքային ջրերում բուժվելու, նրա բացակայության մասին լուրը ոգևորությամբ ընդունեցին պարսից զորքը, Աբաս Միրզան: Վերջինս 1826թ. հուլիսի 16-ին 100-հազարանոց զորքով շարժվեց դեպի Ղարաբաղ, որտեղ տեղակայված էր 1.000 զինվոր՝ փոխգնդապետ Նագիմկայի հրամանատարությամբ: Պարսից բանակի մի մասին առաջնորդում էր Աբաս Միրզան (60.000-անոց զորքով), մյուսին՝ Ֆաթալի շահի փեսա Ամիրխան Սարդարը (40.000-անոց):

Արշավանքի նպատակը մեկն էր. գրավել Շուշին՝ Անդրկովկասի բանալին: Աբաս Միրզայի զորքը, մտնելով Ջանգեզուր, կոտորեց դեպի Շուշի շտապող 400 ռուս զինվորներին, ապա ներխուժելով Ավետարանոց, որտեղից պոկովինիկ Րնուտը իր զորքով՝ հեռացել է, հրդեհել տվեց Մադաթովի սեփական տունը, մի քանի այլ զեղեցիկ տներ և ռուսների զինանոցը:

Աբաս Միրզան 20.000-անոց զորք ուղարկեց՝ գրավելու Գանձակը: Վայրիվերո խաժամուժով, թափառական ցեղերի կողմից ասպատակ սփռվեց Ղարաբաղում: Շուշիում 500 անգն զինվոր կար: Ռուսները շտապելուց Ավետարանոցում էին թողել թնդանոթները և զենքը, որոնք անցան Աբաս Միրզայի ձեռքը: Անգն Շուշին մնացել էր պարսկական զորքի դեմահանդիման, մյուս կողմից, քաղաքում հացի պակասություն էր:

Սակայն հայ քաջերը չընկրկեցին թշնամու առաջ: Գիշերը խաչենցիները գաղտնաբար ուտելիք և ալյուր էին հասցնում պաշարվածներին:

Հետաքրքիր է այն դրվագը, երբ ալյուր տանող ամուսնու հետ գնացող կինը՝ շուշենցի Խաթունը (Րաֆֆու մոտ՝ Խաթային), տեսնելով հետապնդող հինգ զինվորներին (ամուսինը փախչում է), քարերով հալածում է սարվազներին, խլում է ցած գլորված մեկի հրացանը, սուրը, կովելով և ալյուրը քարշ տալով, սպանելով ևս մի քանիսին՝ մտնում բերդ: Պոկովինիկ Րնուտի առաջարկությամբ՝ ռուսաց կառա-

¹ Գաղտնիք Ղարաբաղի, Հնդկականություն Ապրենի Բեկնազարյանց, Արդենաթ եւ ծախիւք մեծապատիւ տնառն Առաքել Աղա Օատուրեան, Ս. Պետերբուրգ, 1886, էջ 357:

վարությունը Խաթունի համար ցմահ թոշակ է նշանակում: Աբաս Միրզան հեռադիտակով տեսնելով այդ ամենը՝ գոչում է. «Եթե Ղարաբաղի կանայք այդպէ՛ս են, մարդիկ որպէ՛ս կը լինին»¹:

Պաշարումը տևեց 48 օր, սակայն իզուր անցան նաև Աբաս Միրզայի հորդորներն ու ջանքերը:

Բնուտը խստիվ մերժեց թագաժառանգին՝ բերդը հանձնել: Այն գրավելու համար Աբաս Միրզայի գործադրած բոլոր հնարները՝ ի դերև ելան: Ապրես Բեկնագարյանը հանգամանքների բերումով գտնվում էր պարսից բանակում և այդ իրադարձությունների մասին գրում է որպես ականատես: Նրա պատմությունը դարաբաղի քաջերի ռազմագիտական անգերազանցության վավերագրությունն է. «Երկար ժամանակ պատերազմի ասպարէզ դարձած և պատմական մեծ նշանակութեամբ փայլած Ղարաբաղն, - գրում է նա, - ծնած էր շատ Մատաթովներ և կրթած էր իտալացի, գաղղիացի, օսմանցի և պարսկաստանցի ռազմագէտներից անլի հմտագոյն պատերազմագէտներ, որք էին Նէառատէօվն, Քեանդլիստան, Օշափն, Կէծակն, Սափարի-Իօղաշին և բոլոր քաջերն: Ահա սորա էին Շուշին պաշտպանողներն Պարսից ահագին զօրութեան դէմ և ի դերև հանողներն այդ ռազմագէտների բոլոր ձեռնարկութիւնները և հնարագիտութիւնները: Բայց այդ դիւցազուն քաջերն մերժեցին բերդը թշնամուն յանձնելը և վատանունութեան կեղտ անուն թողնելը Ղարաբաղի տղամարդոց վերայ, մահը նախապատիւ համարելով քան անուանարկ կեանքը»²:

Պատմագրի զեղարվեստական հետաքրքիր հնարանքներով պատմականությանը միահյուսել է վիպական տարրեր և լեզվական ոճավորումներով էպիկականության նուրբ երանգներ հաղորդել շարադրանքին:

Նշենք որ, մերթնդներթ դրսևորվող լեզվական շեղումները ժամանակի լեզվամտածողության հետևանք են և չեն ստվերում երկի պատմագիտական բարձր արժեքը:

Դա, անշուշտ, դրսևորվում է պատմական իրողությունների ճշմարտացի արտացոլման միջոցով: Բեկնագարյանը գրում է. «Պէտք չէ մոռանալ որ օտարագգի ռազմագէտներն զարմացած էին Ղարաբաղի ռազմագէտ հայ քաջերի զգուշաւոր անմերձեմալի հմտութեան վերայ:

Վերջապէս պաշարումն տևեց ամբողջ քառասուն և ութ օր. բերդն մնաց անառիկ, ի մի ձուլուած Հայերն աննկուն, օտարագգի ռազմագէտներն շուարած,

Աբաս-Միրզան յուսահատ, Մէյտի ճըռ-խանն կորագլուխ և պարսկական զօրքն ամօթահար»³:

Այդուամենայնիվ, անհերքելի փաստ է, որ Աբաս Միրզայի՝ պարսից գահաժառանգի ուժերը 20 անգամ գերազանցում էին ռուսական զորքերին, բայց ինչպես միշտ, այս անգամ էլ նա պարտվում է աներկյուղ, սարսափազդու, փայլուն ռազմագետ գեներալ Մադաթովին, որին անվանում էին «Ռուսական Մյուրատ», իսկ մարշալ Մյուրատը (Հովակիմ Մուրադյան)՝ Նապոլեոնի հավատարիմ ու անպարտելի զինակիցն էր, Նեապոլի արքան: Մարշալ Մյուրատը և գեներալ Մադաթովը եղել են հայրենակիցներ, ծնունդով Ղարաբաղի Վարանդայի Ավետարանոց մելիքանիստից:

Աբաս Միրզայի որդին՝ Մամատ Միրզան, հորն ուղղած նամակում թվարկելով իրենց ահավոր կորուստները, իրեն օգնության փութացող հորը տեղեկացնում է, որ չնայած ինքը գրավել էր Գանձակը, բայց «տեսնելով որ Մատաթովն մօտենում էր Գանձակին՝ անլի ընտրած էր թշնամուն թողուլ գրաւուած Գանձակը՝ քան թէ վիատեալ զօրքով պատերազմել Մատաթովի հետ և կրկին յաղթուիլ»⁴:

Նիկոլայ Առաջին ցարի համհարզը՝ գեներալ Պասկևիչը, իր օժանդակ գնդով, շուտով միանում է Գանձակի մոտ գտնվող գեներալ Մադաթովի զորքին: Իսկ շահը Արտաքիլում կազմած հիսուն հազարանոց զորքով միանում է Աբաս Միրզային: 1826թ. սեպտեմբերի 13-ին երևաց Մադաթովը՝ իր բանակով. նա «եռաթև դասաւորեց իւր զօրքը, թնդանօթածիգ և հետևակ զօրքը մէջտեղում, հայ հեծելազօրքը հինգ հարիւր դազախներով աջ՝ և վրացի հեծելազօրքը նոյնքան դազախներով ձախ թևում»: Հետաքրքիր է, որ գեներալ Մադաթովը համարյա միշտ մարտի սկզբում զորքը դասավորում էր եռանկյունաձև, ինչը մենք տեսնում ենք հայոց նախնի Հայկի ռազմագիտական փորձում, երբ վերջինս կռվում էր Բելի հետ և հաղթում նրան:

¹ Նույն տեղում, էջ 362:

² Նույն տեղում, էջ 365:

³ Նույն տեղում, էջ 366:

⁴ Նույն տեղում, էջ 369:

Թշնամին հետևում է Մադաթովի օրինակին: Պատմագիրը գրում է. «Բաղխեցան երկու ուղղաձիգ ճակատներն միմեանց. սայրասուր սլաքներով կատաղաբար խոցոտեցին մէկգմէկ, դիաթաւալ խաղացին սլաքահարներն, յետ մղուեցաւ պարսկական ուղղաձիգ զօրաբաժինն, որին հետապնդեց ռուսականն անընդհատ սլաքահարելով...»¹: Հաղթությունը կատարյալ էր...

Պարսկաստանը սարսափի մեջ էր. «Սոսկաց Պարսկաստանն, սարսափեց Թաւրիզն ու Թէհրանն, ափշեց հասարակութիւնն, զարհուրեցան շահագունք ու դողացին փախստական խաններն»²:

Աբաս Միրզան, պարսկած, իր զորքի մնացորդներով անցնում է Արաքսը՝ մտնելով Պարսկաստան...

Գանձակը գրավելուց հետո Մադաթովին ներկայացնում են գեներալ-լեյտենանտի զինվորական աստիճանի և պարզևատրում «Քաջության համար» մակագրությամբ ադամանդակոտ սրով:

Մադաթովը վերադառնում է Ղարաբաղ:

Գեներալ Պասկևիչը հավաքական ուժով գրավում է Երևանը և Արարատյան նահանգը:

Մակար Բարխուդարյանը բնութագրելով հայ գեներալին, գրում է. «Ինչպէս վկայում են պատմութիւններն՝ Կենեազ-Մատաթովն անյաղթելի մնացած է բոլոր պատերազմներում: Կենեազ-Մատաթովն Ռուսաց ամենահաւատարիմ, քաջայաղթ, արդիւնատու և եզակի զինուորականն եղած է»³:

Գանձակում հայերը հանդիսությամբ են դիմավորում գեներալ Մադաթովին ու նրա զորքին մեծ պատիվների արժանացնում, իսկ «Միսկին-Պուրճի անուամբ մի հայ բանաստեղծ մի բանահիւսական տաղաշափով գոված և փառատրած էր Մատաթովի յաղթութիւնը և պարսաւած Պարսից զօրքի երկչոտութիւնը»⁴:

Հարկավ, «Գաղտնիք Ղարաբաղի»-ն այս տեսանկյունից ևս ներկայանում է որպէս պատմական, գրական արժեքավոր աղբյուր, ներկայացնում գուսանական արվեստը, խոսում 1820-ական թվականներին Գանձակում ապրող և ստեղծագործող տաղանդավոր բանաստեղծի՝ Միսկին-Բուրջու մասին, որը տարբեր ժանրերով երգեր էր հորինում, որոնց մեջ պատկերվել է հայաշատ Գանձակի կյանքը՝ բազմաբնույթ շերտերով, իսկ հայ բանաստեղծները, գուսանները երգեր են հյուսել նշանավոր իրադարձությունների ու անձանց շուրջ և... դրանք երգել մեծ արվեստով:

Այս մասին պատմության թարգմանիչը՝ Մ. Բարխուդարյանը, ծանոթագրում է. «Հայոց աշուղներն իրենանց սագերով և երգերով փոքր ծառայութիւն արած չեն մեր սիրելի Ազգին. այլ իրենանց սագերը առած, ժողովուրդը իրենանց գլխին հաւաքած՝ տներում, հրապարակներում և բացօթեայ տեղերում երգած են սէր առ Աստուած, սէր առ կրօնն, սէր առ Ազգն, սէր առ Հայրենիքն, ևն, ևն, և այսպիսով ժողովուրդը առաջնորդած դէպի բարին, դէպի առաքինութիւնն և դէպի օգտակարն: Միսկին-Պուրճին Գանձակեցի էր և Հայաստանի հայ աշուղներից առաջին կարգի բանաստեղծներից մին: Սա երգած է հայերէն և օտար լեզուներով հայրենասիրական, ազգասիրական, գովասանական (գուսանական - Ա.-Բ.Զ.), պարսաւական և սիրահարական շատ երգեր, որոց մէջ փայլում են իր բնատուր հանճարն և բանահիւսական վառ աւիւնն: Բայց ցաւալի է տեսնել որ սորա երգերի մեծ մասն լոյս տեսած չեն և ոչ էլ զոնէ գրուած, այլ աւանդութեան մէջ մնալով անհետանում են հետզհետէ»⁵:

Նշենք, «Գաղտնիք Ղարաբաղի»-ն հայ բանաստեղծի՝ Միսկին-Բուրջու վերոհիշյալ քերթվածի համար բնագրային արժեք ունի: Ցավալին այն է, որ երկը գրված է թուրքերեն (հարկավ՝ բանաստեղծը խաղեր է հորինել նաև թուրքերենով)⁶, բայց որը մեր խնդրանքով հայերեն է թարգմանել բանաստեղծ, բ.գ.դ., պրոֆեսոր Ս. Ա. Խանյանը:

1828թ. փետրվարի 10-ին Թավրիզի և Թեհրանի միջև գտնվող Թուրքմենչայ գյուղում կնքվում է հաշտության պայմանագիր: Ավարտվում է Ռուս-պարսկական պատերազմը: Պարսկաստանը ռազմական մեծ տուգանք է տալիս Ռուսաստանին և մեծ թվով հայ գերիներ է վերադարձնում:

¹ Նույն տեղում, էջ 372, 376:

² Նույն տեղում, էջ 379:

³ Նույն տեղում, էջ 381-383:

⁴ Նույն տեղում, էջ 373:

⁵ Նույն տեղում, էջ 376-377:

⁶ Նույն տեղում, էջ 373-376:

Սակայն Ղարաբաղ է վերադառնում է նաև Մեհտի խանը, որը սանդրանքների միջոցով հողատեր է դառնում Արցախում և անպատիժ մնալով՝ նորից հայտնվում Շուշիում:

Հետաքրքիր է ՄԸ գլուխը, որտեղ Բաղդասարի գրած նամակում (թվագրված՝ 20-ին սեպտեմբերի. 1828թ.) խոսվում է Ղարաբաղի մեկիքություններին վերաբերող թաքցրած ձեռագրերը լույս աշխարհի հանելու և տպելու մասին¹:

Ապրես Բեկնազարյանի հայրը՝ Աբրահամը, որը մահամերձ էր, մարտական ընկերոջն է հանձնում իր զենքերը, իսկ որդուն՝ մի ծրար, որում ամփոփված էին Ղարաբաղի մեկիքների գրած պատմական թղթերը ուղղված Պետրոս Մեծին, Եկատերինա Բ կայսրուհուն ու վերջիններիս նամակները Աղվանից կաթողիկոսին և մեկիքներին, ինչպես և շատ ու շատ երևելիների գրած կարևորագույն հաղորդագրությունները:

Հետո որդուն հանձնարարում է դրանք գետնից «Գաղտնիք»-ում ու զգուշանալով՝ դեռևս տպագրության չտալ, բացատրում է այն գաղտնարանները, որոնցում թաքցվել են հին ձեռագրերը, ապա նրան պատգամում է.. «...սիրի՛ր արիությամբ քո Ազգը, Եկեղեցին և Լեզուն, ապրի՛ր սոցա գրկում, քանզի Հայի համար դոքա են մխիթարություն, սրբություն և կեանք»²:

Աբաս Միրզայի կարգադրությամբ Աբրահամ Բեկնազարյանի աճյունը մեծ պատվով ու հարգանքով ամփոփվում է Թավրիզի հայոց եկեղեցու գավթում՝ մեկիքաժառանգ Առստամ բեկի գերեզմանի հարևանությամբ:

Սակայն ծրարի պարունակությունը ոչնչացված էր, անընթեռնելի ու ո՛չ պիտանի:

1834թ. մահկանացուն կնքած Ֆաթալի շահին փոխարինում է Մամադը: Նա ազնիվ էր, գթառատ, հպատակասեր և գնահատեց հայերի ծառայություններն ու շնորհները:

1805-06 թթ.պատերազմական տարիներին, Ղարաբաղից Պարսկաստան գերության տարված պատանիներից Հովսեփ Ներսիսյանը (Հաղորդից) և Փարուխ Ամիրխանյանը պարսից երկրում նշանավոր դարձան. կրթություն ստացան եւ շահի դիվանատանը գրագիրներ եղան, ձեռք բերեցին պատվանուն-տիտղոսներ՝ կոչվելով Միրզա-Յուսուֆ եւ Միրզա-Ֆարուխ: Ազնիվ էին, ընկերասեր, հայրենասեր և աստվածապաշտ: Սրանցից զգուշանալով՝ Ապրեսը խոսք չբացեց «Գաղտնիք»-ի մասին, չնայած ընկերություն էր անում նրանց հետ: Նրանք երկուսն էլ պարսից երկրում վայելել էին Աբրահամ Բեկնազարյանի հովանավորությունը: 1828 թ. ազատվեցին գերությունից և Ղարաբաղ վերադարձան:

Հայրենիքում սիրով ընդունվեցին Բաղդասար սրբազանի կողմից և հաստատվեցին Շուշիում ու պարսկերենի ուսուցչությամբ էին զբաղվում:

1836թ. երկու երիտասարդները Ապրեսին գրում են. «Մէյտի-Ղուլի ճըռ-խանի, արքայանքից յետ դարձած Ջափար-Ղուլի ճըռ-աղայի, Միրզա-Ատի-Կեօզալի և բոլոր ճըռ-բեկերի գաղտնի թելադրություններով Ղարաբաղն աւագականոց դարձած է: Գողութիւն, աւագակութիւն, յափշտակութիւն, մարդասպանութիւն, աւարառութիւն՝ սովորական արուեստ դառած են...»³:

Գրության մեջ այնուհետև խոսվում է գաղտնի ձեռագրերի մասին. «Բաղդասար մետրապօլիտն յաջողեցաւ գտնել թագցրած ձեռագրերի մի մասը: Մի թուրք որսորդ դիպուածով գտնում է մի քարայրի գրքերով, որի դուռը պատուած է եղել քարովի որմով: Քարայրն գտնուում է Գանձասարի և Թարթառ գետի մէջտեղերում: Քարայրից ելած է ի միջի այլոց «Պատմութիւն Աղուանից», շահական հրովարտականք և մի քանի ձեռագիր եկեղեցական գրքեր: Բաղդասար մետրապօլիտն, շարունակում է հեղինակը,- հետամուտ եղած է գտնել և միւս մասերը խուզարկութիւն առաւ դրան տալով:

Որքա՛ն ուրախութիւն կը լինէր, եթէ գտնուէին և միւս մասերն: Բաղդասար մետրապօլիտն աշխատում է յետ խլել ճըռ-բեկերից վանքապատկան յափշտակուած հողերը, անշուշտ յաջողելու է, քանզի իր ձեռնում ունի զօրաւոր փաստեր»⁴:

Ահա այս վավերական, ժամանակագրական, պատմաքաղաքական կարգով են ամբողջացվել Ղարաբաղի ու հայության ճակատագրին առնչվող վարքամատյանի թանկարժեք էջերը, որոնք գաղթի, գերեվարության, ցավի ու տառապանքի, կորուստների, հերոսության, քաջագործությունների, ինքնագոհության ազատատենչ դրսևորումներ են և տեսանելի են Ապրես Բեկնազարյանի «Գաղտնիք Ղարաբաղի» պատմության մեջ:

¹ Տես նույն տեղում, էջ 386-387:

² Նույն տեղում, էջ 389:

³ Նույն տեղում, էջ 393:

⁴ Նույն տեղում, էջ 394:

Գրականություն

1. Գաղտնիք Ղարաբաղի, Հնդինականություն Ապրենի Բեկնագարենաց, Արդենամք եւ ծախիւք մեծապատիւ տնառն Առաքել Աղա Ծատուրենան, Ս. Պետերբուրգ, 1886:

Տեղեկություններ հեղինակի մասին

Զինաիդա Բալայան – բ.գ.թ., դոցենտ, հայ գրականության և լրագրության ամբիոն

E-mail: zinaida-firuze@yandex.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ. Ս. Խանյանը: